ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՕՁՈՒՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10,
Հեռ. (0253) 6-16-62, www.odzun.am, Էլ. փոստ odzun.lori@mta.gov.am, odzun@bk.ru

թիվ 131-15
29 ապրիլի 2015թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Ձեզ ենք ներկայացնում Օձուն գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 29-ի N 13-ից N 15 որոշումները:

Առդիր՝ հինգ թերթ:

Օձուն համայնքի ղեկավար *Ա. Տիտանյան*

Կատարող՝ Վ. Տիտանյան
հեռ. 0253-6-16-56

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2015 թվական, N 13-Ա

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 12-րդ 12[1]-րդ և 14-րդ հոդվածների՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Օձուն գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 29-ի հինգերորդ հերթական նիստի օրակարգը.

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

2) ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 06-112-0053-0095 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (7)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Ս. ԱՍՐՅԱՆ		
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ		
Դ. ԴԱՎԹՅԱՆ		
Ս. ԴԱՎԹՅԱՆ		
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ		
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ		
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ • ՕՁՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ • ZZ • 06600612

2015թ., ապրիլի 29, ժ. 11:00
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2015 թվական, N 14-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 32-րդ կետով՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Լոռու մարզպետի կողմից 2015 թվականի 1-ին եռամսյակում Օձուն համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների նկատմամբ իրականացված վարչական հսկողության ժամանակ կազմված ակտի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ակտում արձանագրված թերությունների և բացթողումների ուղղման և կանխարգելման ուղղությամբ:

3.Ձեռնարկված միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետին և ավագանուն:

Կողմ (7)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Ս. ԱՍՐՅԱՆ		
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ		
Դ. ԴԱՎԹՅԱՆ		
Ս. ԴԱՎԹՅԱՆ		
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ		
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ		
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՏԻՏԱՆՅԱՆ

2015թ., ապրիլի 29
Գ. Օձուն

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2015 թվականի ապրիլի 29-ի N 14-Ա որոշման

ՀԱՂՈՐԴՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի կողմից 2015 թվականի առաջին եռամսյակում Օձուն համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների նկատմամբ իրականացված վարչական հսկողության ժամանակ կազմված ակտի վերաբերյալ համայնքի ղեկավարի

1.Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների բնագավառ

1. Գյուղապետարանի աշխատակազմում առկա է գործավարության կարգ, այն առաջիկայում կհաստատվի լրամշակված տարբերակով:

2. Նոյեմբեր ամսին կիրականացվի համայնքի սեփականության գույքի ամենամյա գույքագրումը և այսուհետ սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում գույքագրման փաստաթղթերում համապատասխան փոփոխությունները կկատարվեն և դրանք կներկայացվեն ավագանու հաստատմանը ավագանու առաջիկա նիստում:

3. Այսուհետ բացառել գործուղման գումարները վճարման սահմանված կարգի և ժամկետների խախտումները:

Ծախսերը հաստատող փաստաթղթերը լրացնել սահմանված կարգով:

Աշխատանքի հաճախումների տաբելներում հետագայում բացառել հայտնաբերված թերությունները:

Այսուհետ բյուջեի կազմման ժամանակ աշխատողներին դրամական խրախուսումներ և պարգևատրումներ տրամադրելու համար գումարներ նախատեսել «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով:

4. Ավագանու կողմից սահմանել նաև հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության և համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքերի դրույքաչափեր:

5. Երկամսյա ժամկետում ապահովել սեփական եկամուտների կատարումը, ապառք ունեցողների հետ կնքել մարման ժամանակացույցեր: Ժամանակացույցով գանձումները չկատարելու դեպքում ներկայացնել հարկադիր գանձման: Տեղական տուրքի գումարները գանձել սահմանված ժամկետներում:

6. Հարկերը չվճարող անձանց դեպքում, երկամսյա ժամկետում օրենքով սահմանված կարգով խոշոր պարտքեր ունեցողների ցուցակը ներկայացնել հարկադիր գանձման:

7. Այսուհետ բազային միավորը գերազանցելու դեպքում բանակցային ընթացակարգով գնում կատարելու տարբերակը ընտրելուց առաջ փաստաթղթերով հիմնավորել, որ ժամկետի առումով անհնար է կիրառել գնման այլ ընթացակարգ:

2. Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների բնագավառ

1. Համայնքի ղեկավարին՝ հանձնարարել առևտրի օբյեկտների սեփականատիրոջը քսանօրյա ժամկետում վերացնել հայտնաբերված թերությունը (որոշ խանութների վրա ուղղվածությունը նշված չէ):

3. Բնապահպանության բնագավառ

1. Այսուհետ բնապահպանական ծրագրերի նախագծերն անհրաժեշտ է տեղադրել համայնքապետարանի ինտերնետային կայքում և այլ լրատվամիջոցներում (ծրագիրը քննարկվել է միայն ավագանու նիստերում):

2. «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթների համաձայն կազմել համայնքի սանիտարական մաքրման սխեմա (կատարվում է կենտրանացված աղբահանություն: Հավաքված աղբը տեղադրվում է Ալավերդի համայնքի աղբավայրում: Սանիտարական մաքրման սխեմաներ չկան:):

4. Հողաշինության և հողօգտագործման բնագավառ

1. Քսանօրյա ժամկետում կասեցնել ապօրինի հողօգտագործումը կնքել արոտավայրերից օգտվելու համար համապատասխան պայմանագրեր (խախտվել է ՀՀ կառավարության 28.10.2010թ. թիվ 1477-Ն որոշմամբ սահմանված կարգը):

2. Այսուհետ համայնքի հողային հաշվեկշիռը կազմել համաձայն ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ սահմանված կարգի:

3. Քսանօրյա ժամկետում հողի հաշվառման գրքերում լրացնել հաստատված տվյալները՝ համաձայն ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետի:

5. Կոմունալ բնագավառ

1. Մինչև 15.05.2015 թվականը սահմանված կարգով ապահովել գերեզմանատեղերի գրանցան մատյանի վարումը և գերեզմանի վկայականի տրամադրումը համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշման:

2. Այսուհետ հուղարկավորությունների հետ կապված մատուցվող վճարովի և անվճար ծառայությունների ցանկը համապատասխանեցնել և հաստատել սահմանված կարգով:

3. Մինչև 15.12.2015 թվականը սահմանված կարգով մշակել գործող գերեզմանատան համար հողերի օգտագործման հատակագծի տրամադրումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում):

4. Մինչև 15.12.2015 թվականը սահմանված կարգով ապահովել գերեզմանատան մուտքի մոտ գերեզմանատան հատակագծի և գերեզմանատնից օգտվելու կանոնների տեղադրումը և գերեզմանատան տարածքի մաքրության պահպանումն ու աղբահանության կազմակերպումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում):

5. Մինչև 20.05.2015 թվականը սահմանված կարգով սահմանել վճարովի հիմունքներով տրամադրվող գերեզմանների հողատարածքի արժեքները (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում):

6. Մինչև 15.09.2015 թվականը ապահովել «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջները:

7. Մինչև 20.12.2015 թվականը սահմանված նորմերին համապատասխան համայնքում տեղադրել աղբի հավաքման կոնտեյներներ:

8. Մինչև 01.07.2016 թվականը աղբատար փոխադրամիջոցը ապահովել աղբաջրերը հավաքող համակարգով կամ ձեռք բերել նորը:

6. Քաղաքաշինության բնագավառ

1. Սահմանված կարգի համաձայն (ՏԻՄ ՀՀ օրենքի 37-րդ հոդված) միջոցներ ձեռնարկել համայնքի գլխավոր հատակագիծ և գոտիավորման նախագիծ կազմելու համար:

2. Սահմանված կարգի համաձայն (ՏԻՄ ՀՀ օրենքի 37-րդ հոդված) վարել համայնքի քաղաքաշինական քարտեզը:

3. Սահմանված կարգի համաձայն (ՏԻՄ ՀՀ օրենքի 37-րդ հոդված) վարել համայնքի քաղաքաշինական մատյան:

4. «ՀՐԱՇՔ ՄԵԿ» ՍՊԸ-ին գազալցակայան կառուցելու համար թերի լրացված փաստաթղթերը, առաջնորդվել ՀՀ կառավարության 29.08.2002թ. թիվ 1473-Ն որոշմամբ, լրացնել սահմանված կարգի համաձայն:

5. Ճարտարապետաշինարարական նախագծերը համապատասխանեցնել ՃՀԱ-ում նշված դրույթներին և ՀՀ օրենսդրությամբ ճարտ. շին. նախագծերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին: Չպահպանված նախագծերում վերացնել թերությունները և այսուհետ առաջնորդվել ՀՀ կառավարության 29.08.2002թ. թիվ 1473-Ն որոշմամբ:

6. Ճարտարապետաշինարարական նախագծերը մշակված են նմանատիպ նախագծերի մշակման լիցենզիա ունեցող կազմակերպության կողմից (բացառությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերին համապատասխան): Չպահպանված նախագծերում վերացնել թերությունները և այսուհետ առաջնորդվել ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 91 որոշմամբ:

7. Ճարտարապետաշինարարական նախագծերի վերաբերյալ առկա է ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննության /ների/ դրական եզրակացությունը կամ II կատեգորիայի օբյեկտների համար՝ հեղինակի երաշխավորագիրը: Չպահպանված նախագծերում վերացնել թերությունները և այսուհետ առաջնորդվել ՀՀ կառավարության 21.12.98թ. թիվ 812 որոշմամբ:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2015 թվական, N 15-Ա

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0053-0095 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, 38-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետի, 51-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ մասի, 63-րդ հոդվածի երրորդ կետի 67-րդ, հոդվածի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, գ. Օձուն, փողոց 5, փակուղի 4, N 17 հասցեում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0053-0095 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.16741 հա մակերեսով հողամասը, բնակելի կառուցապատման նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել 572 508 (հինգ հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր ութ) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար մեկ հազար (1 000) ՀՀ դրամ:

Աճուրդում հաղթող ճանաչել առավել բարձր գին առաջարկող մասնակցին:

Վերոնշյալ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Հողամասի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

2. Օձուն համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի աճուրդը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (7) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2015թ., ապրիլի 29
Գ. Օձուն